Ի վայր սրբազան կեանք քո սահեսցին
Զերծ 'ի վըտանգաց՝ 'ի յարկս անմահին.
Իբրև զայն լապտեր լուցեալ 'ի բեմի,
Կամ զանուշահոտ աղօթից ձօնի.
Կամ իբր ըզկնդրուկ զոր անդ Բարձրելոյն
Ընծայէ Սրովբէն երգովք եռանդուն:
Եւ դու այժմիկ 'ի գիրկս իմ ո՛ն
Պետացիդ սուրբ, հանգիր 'ի քուն:

Ներեա ինձ Աստուած, թէ յանչափ գութս իմ
Յանցեայ իմաստուն օրինաց քոյին.
Եւ եթէ մեղայ՝ զիս լոկ պատժեսցես,
Զի թերեհաւատ միայն գըտայ քեզ.
Միշտ առ որդանաւ՝ մօր սրտի տենչանք
Հարկ է թէ իցեն օրհնութեան մաղթանք.
Ի քեզ Տէր որդւոյս հոգք են ապաստան,
Վան ինձ՝ քեզ ծանօթ, նոյնչափ սիրական:
Եւ դու հրեշտակդ իմ յաչս աղու
Հանգիր 'ի գիրկս յայս յանդորրու:

Հ. Տ. Թ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՒԱԾ ԻԳ

Փոխ[1]:

ՏԷՐՈՒԹԻՒՆՔ կամ իրենց տնտեսութեան թերութեանը պատճառաւ, և կամ կարգէ դուրս գիպուածի մը, ինչպէս են պատերազմ, հասարակաց վերաբերեալ հարկաւոր շինութիւն մը, և այլն, չեն կրնար իրենց տարեկան եկամուտը բանեցրնել, և հարկ կ'ըլլայ տէրութեան սակը[2] աւելցրնել, իրեք չորս հարիւր միլիոն մը վրան աւելցրնելով: Բայց որովհետև ժողովուրդը արդէն նեղեալ է տուրք տալէն, և շատ անգամ աղքատք գրեթէ իրենց կարողութենէն վեր տուրք կուտան, չկրնար տէրութիւնը նորէն մեծ գումար մը տուրք ձգել ժողովրդեան վրայ. ուստի կը ստիպուի ուրիշ հնարքով մը աս ստակը ձեռք բերել. և ահա հարկ կ'ըլլայ փոխ ստակ առնել. հարիւրին 5, 4, 3 շահ տալով, անանկ որ տէրութիւնը մէկ տարուան մէջ կրնայ 200 միլիոն փոխ ստակ առնել՝ տարեկան տուրքը 10 միլիոն միայն շատցրնելով. որ երկրին ընդարձակութեան և բնակչաց շատութեանը նայելով քիչ բան մը կ'երևնայ. և աս 10 միլիոնը 200 միլիոնին շահը վճարելու համար է: Տէրութիւնը միլիոններու կարօտ եղած ժամանակը՝ որպէս զի կարենայ մէկէն պատրաստ ստակ գտնել, հասից թուղթեր[1] կը հանէ. որոնց վրայ նշանած է այսչափ դրամագլխոյ այսչափ եկամուտ. զոր օրինակ 100ին 5. աս թուղթերը որովհետև տէրութիւնը երկայնմտութեամբ զատ զատ չկրնար ծախել, մեծամեծ լումայափոխներու կամ մանա-

1 Emprunt.

2 Budget.

1 Titres ou rentes.

ւոր ընկերութեանց հետ կը դաշնագրի, ու օրինակի համար՝ 200 միլիոնի հասից թուղթ տալով՝ անոնցմէ 50, երբեմն ինչուան 100 միլիոնի պատրաստ մետաղ ստակ կ'առնէ ։

Իսկ ընկերութիւնը կամ լումայափոխները այն թղթերը գնածներնէն աւելի բարձր աժէքով առոր անոր կը ծախեն. ու մէկէն միլիոնները կը վաստըկին ։ Բայց ինչպէս որ կ'ըսէ Սաւանիէ, "Երբ այսպէս դրամագլուխը կ'այլայլի, բուն այլայլողը անոր շահն է. վասն զի թէպէտ և հասից թուղթին վրայ որոշ կերպով 100 ֆրանք դրամագլուխ և 5 ֆրանք շահ դրած է, սակայն մէկը նոյն թուղթը առնելու ատեն թէ որ տեղը 50 ֆրանք տուեր է միայն, ան ատեն 0/0ին բուն 10 շահ կուգայ. և թէ որ 65 ֆրանք տուեր է, բուն շահը 0/0ին 6 կ'ըլլայ, և այլն". վասն զի ինչպէս որ վերը ըսինք, տէրութիւնը 100 ֆրանքնոց թուղթին տեղ իրօք 50 կամ 60 կամ 70 ֆրանք միայն կ'առնէ, և անդին 100 ֆրանք դրամագլխոյ շահ պիտի տայ ։— Հասից թուղթերուն աժէքը կը բարձրանայ կամ կը ցածնայ երբոր երկրի մը մէջ վստահութիւնը շատնայ կամ քիչնայ. երբոր 1848ին փետրուարի 24ին Լուի-Ֆիլիփ թագաւորութենէ ընկաւ, Փարիզի Պուրսին[1] մէջ հասից թուղթերուն աժէքը գրեթէ կէս վար իջան, և հիմա թէպէտ և բաւական բարձրացան, բայց որովհետև կառավարութիւնը դեռ բոլորովին հաստատութիւն առած չէ ինչպէս որ պէտք է, այն պատճառաւ վստահութիւնն ալ դեռ քիչ է. և տէրութեան մէջ աղէկ կամ գէշ պզտի փոփոխութիւն մը ըլլալուն պէս՝ հասերն ալ նորէն կը բարձրանան կամ կը ցածնան ։

Տէրութեան տարի տարուան վրայ հարիւրաւոր միլիոն փոխ ստակ առնելով հասարակաց պարտքը շատցընելուն, թէպէտ և հասութականաց մէջ քանի մը ջատագովներ եղած են, բայց տնտեսականք առ հասարակ միաբան են անոր վնասակարութեանը վրայ ։ Գլխաւոր օգուտ մը թէ որ ունի՝ այս է, որ կարգէ դուրս կարօտութեան մը ատեն տէրութիւնը կրնայ պատրաստ ստակ գտնել մէկէն, սակայն այս պզտի օգտին նայելով վնասները խիստ մեծ են. մեծ չէին ըլլար, թէ որ տէրութիւնը միայն իր վերջին կարօտութեան ատեն այս հնարքը բանեցընէր, և կարօտութիւնը անցնելէն ետև՝ փոխ առած դրամոցը շահին հետ դրամագլուխն ալ վճարէր, ինչպէս որ հին ատենը կ'ընէին տէրութիւնք ։ Բայց քանի որ հասութականաց ճարտարարուեստութեամբը այս հնարքը կատարելագործուեցաւ, և տէրութիւնք անդարձ գոյիւ[1] ստակ փոխ առնել, իրաւցընէ փոխին վնասները խիստ ծանր եղան. վասն զի այս հնարքը տէրութեան պաշտօնէից գեղխութիւնը աճեցընելու, և երկրի մը բարւոք տնտեսութեան միջոցները ետ ձգելու առիթ եղաւ. և աւելի մեծ չարն այն է, զի որ տէրութեան մէջ որ այս հնարքը յաջողութեամբ 'ի գործ դրուած է, հոն հասարակաց պարտքը օր ըստ օրէ ծանրանալով՝ ազգը սնանկանալու վտանգին մէջ ինկած է, պատերազմի կամ քաղաքական խռովութեան մը ատեն ։ Այս բանս անիրաւութիւն մըն է որ ներկայ ժամանակի մարդիկ կ'ընեն իրենց յաջորդացը. որոնք ամենևին մասնակից չըլլալով այս պարտքը շատցընողներուն խորհուրդին և օգտին, միայն անոր վնասը քաշելու սրտադողին մէջ պիտի ըլլան միշտ ։

Փոխին մէկ վնասն ալ աս է որ չէ թէ միայն ճարտարութիւնները չարծարծէր, ինչպէս որ ոմանք կարծեցին, հապա հասութականաց[2] թիւը շատցընելով՝ անգործ կեանք մը անցընել կուտայ անոնց. այնչափ ինչք որ զանազան ճարտարութեանց պիտի գործածուէին, կ'օտարանան անկից, և տէրութեան անյատակ գանձին մէջ կը մտնեն, մէյ-

1 Bourse. Պուրս բառով տուն պէտք չէ հասկընալ. Վան-Տէր-Պուրս անունով երևելի Հոլանտացի վաճառականի մը անունէն եկած է, որուն տունը մօտ է եղեր լումայափոխներու և վաճառականաց ժողովարանը ։

1 À fond perdu. 2 Rentier.

մ՝ալ բնաւ չելլելու համար անկից։ — Լուդովիկոս ԺԴ-ին օրը խորհրդի մը մէջ որոշուեցաւ որ այսչափ փոխ առնէ տերութիւնը. այս խորհրդեան մէջն էին Լամուանեոն և Ռոլպէր պաշտօնեաները. Ռոլպէր դէմ էր առնուելու փոխին, բայց Լամուանեոնին կարծիքը զօրացաւ. ան ատեն դարձաւ բաւ ա-նոր Ռոլպէր. "Ինպիսի վերք մը կը բանաս որ քու Թոռներդ պիտի չկարե-նան գոցել. գիտցիր որ ատ բանիդ հա-մար պատասխան պիտի տաս աղգին և ապագային „։

Ռանտերորդ երրորդ հատուածնիս վերջի հատուածն է քաղաքական տնտե-սութեան, որուն ամէն գլխոցը վրայ անցեալ տարուան Բազմավէպին մէջ խոստացանք համառօտիւ խօսելու, և ահա խոստմունքնիս կատարեցինք. յի-բաւի մեր հատուածները խիստ ցամաք, ու թերևս շատ անոյշ ալ գրուած էին, բայց նպատակնիս միայն ուսմանս վրայ համառօտ տեղեկութիւն մը տալ էր և անոր ուսումնական լեզուն քիչ մը հաս-կընել։ Լրբոր աւելի ունենանք ուս-մանս մասնաւոր գլուխներուն վրայ նո-րէն գրելու, աւելի ընդարձակ ու ոգով կը շարադրենք։

Հ. Տ. Թ.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ռաւաչեռնի կենդանեաց վրայ պեղեկու-թիւն։

ՌԱՒԱՉԵՌՆԻ կ'ըսուին այն ողնա-ւոր կենդանիները որոնց չորս ոտքն ալ ձեռքի ձևով ըլլալուն՝ կը սեպուին թէ չորս ձեռք ունին։ Այս կարգիս մէջ կը պարունակին կապիկները, որ ուրիշ ա-մէն կենդանիներէն աւելի մարդուս կը նմանին, մանաւանդ իրենց աչքերուն ձևովը, հերձող, ջնիկ ու աղօրիք[1] ակ-ռաներովը և ըղեղին կազմուածքովը. ասոնց ստինքը կուրծքերնուն վրայ է։ Սովորական քալուածքնին չորս ոտքով է, բայց երկու ոտքի վրայ ալ խիստ դիւ-րաւ կ'ելլեն, կը քալեն ու կը նստին. կեանքերնին գրեթէ ծառերու վրայ կ'անցընեն և ճիւղէ ճիւղ խիստ աղէկ կը ցատքեն։ Ուտելիքնին պտուղ ու արմատիք է, անոր համար պարտէզներու ու արտերու մեծ փնաս կուտան. բնա-կութիւններնին տաք կլիմաներու մէջ է և բազմութեամբ մէկտեղ կ'ապրին։

Ինչպէս վերը ըսինք, քառաձեռնի-ներուն մէջ կան որ մարդուս շատ կը նմանին. կան ալ որ ատենանաբար հե-ռանալով հասարակ չորքոտանեաց կը հաւասարին տեսքով. ցուկնին կ'եր-կընայ, մարմիններին կամաց կամաց հո-րիզոնական դիրք կ'առնու, կը պչաւ-րին և բարքերնին ու բնական յօժա-րութիւններնին կը փոփոխի։

Ընտանինք ասոնց կազմութիւնը նայե-լով իրեք գլխաւոր ճիւղ կը բաժնեն. որ են Կապիկ, Բրկապիկ կամ Ուրուրիկ և Արոյ։

Կապիկ։

ԿԱՊԻԿՆԵՐՈՒՆ հասակը միջակ կամ կարճ է, դանկերնին գրեթէ կլոր, ցը-ռուկնին չափաւոր երկայն, քթերնին քիչ կամ ամենևին դուրս ցցուած չէ, վզերնին կարճ, մարմիններին խաղուն, անդամներին ճկուն ու երկայն, կռնակնին երկայն ու խիստ մազերով ծածկած, առ-ջևնին քիչ մազուտ և կամ բոլորովին լերկ։ Լրեանին միշտ գունաւոր է, եր-բեմն կապուտակած մարմնոյ գունով, եր-բեմն սև, երբեմն պղնձագոյն, երբեմն ալ ճերմակ, կապոյտ կամ կարմիր բծե-րով։ Այս կենդանեաց մէջէն ոմանց դէմքը այնչափ նման է մարդուս որ պզտի-կութեան ատեն ասոնց երեսը Հնդիկնե-րէն աւելի չիտակ է. բայց քանի որ տա-րիքնին կ'առնուն՝ երթալով ցուկնին ալ կ'երկրընայ, և ոմանցը այնչափ կ'ըլ-լայ որ շան կը հաւասարի։ Ասոնց շարժ-մունքն ու քալուածքը աւելի մարդուս

1 Dents incisives, canines et molaires.